ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մարտի 2020թ. թիվ 336-Ա

ԿԻՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի 20.03.2020թ. նիստի թիվ 1 արձանագրությունը և հաշվի առնելով Կ.Պետրոսյանի բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. 2019թ. դեկտեմբերի 23-ից 25-ը «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում անցկացված ներքին աուդիտի արդյունքում կազմված աուդիտորական հաշվետվության մեջ արձանագրված մի շարք խախտումների համար, մասնավորապես՝ տվյալ ՊՈԱԿ-ի անգլերեն լեզվի ուսուցչուհի Լուսինե Պետրոսյանի՝ 15.04.2019թ. աշխատանքի չներկայանալու պարագայում բաց աշխատաժամանակի տեղեկագրում վերջինիս բացակա չնշանակելու և չաշխատած ժամերի համար աշխատավարձը վճարելու համար, ՊՈԱԿ-ի տնօրենի 05.08.2019թ. թիվ 55 հրամանի համաձայն նույն ՊՈԱԿ-ի տնտեսվար Հրաչիկ Վարդևանյանի և գիշերային պահակ Սիրանուշ Թոմոյանի միաժամանակ արձակուրդում եղած ժամանակահատվածում մեկը մյուսին փոխարինող նշանակելու համար, ինչպես նաև պատվիրված փոստով ՊՈԱԿ-ի տնօրեն Կ.Պետրոսյանին առաքված և նրա կողմից ստացված՝ վերը նշված հաշվետվության մեջ արձանագրված նմանատիպ և այլ խախտումների համար, «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Կիմիկ Պետրոսյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Կ. Պետրոսյանին՝ հետագայում բացառել նմանատիպ խախտումները:

3. Մարզպետարանի քարտուղարության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում պատվիրված փոստով ծանուցել հասցեատիրոջը՝ ստանալու մասին ծանուցմամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

23/03/20

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. մարտի 23
ք.Վանաձոր